Արձանագրության 7

«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

27.03.2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Խ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մաքսապետյան, Հ. Հարությունյան, Ա.Հազարապետյան, Բ.Տեր-Թովմասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Ղավալյան

1. ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշման վերաբերյալ

(Խ. Հակոբյան)

1.1 Հիմք ընդունելով ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 21.03.2019թ թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/27 որոշումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց դադարեցնել 13.02.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին և 2-րդ կետերով իր կողմից կայացրած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Խ. Հակոբյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվում **«Ագրոատոմ» ՍՊԸ**-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գներ	Մասնակիցների անվանումները				
			1-ին տեղ	2-րդ տեղ		3-րդ տեղ	
			«ԱԳՐՈԱՏՈՄ» ՍՊԸ	«Նոր Բարեկարգում» ՓԲԸ		«Զորաշեն» ՍՊԸ	
			առանց ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն
1	Ծառերի էտման ծառայություն 1	24,996,476	17,377,000	18,625,000	22,350,000	18,973,000	22,767,600
2	Ծառերի էտման ծառայություն 2	22,951,620	15,900,000	16,500,000	19,800,000	16,655,000	19,986,000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և մասնակիցներին ծանուցելու մասին

(Խ. Հակոբյան)

3.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps համակարգով վերջացնել գնահատումը, որից գնահատման հաշվետվության բեռնումից հետո (Evaluation) առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

3.2 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Խ. Հակոբյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված հարցման և փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահող՝		Խ. Հակոբյան
Անդամներ՝		Ս. Մաքսապետյան
		Հ. Հարությունյան
		Ա. Հազարապետյան
		Բ.Տեր-Թովմասյան
Համակարգող՝		Լ. Ղավալյան